

Խմբային աշխատանք
Դասընթաց երկրնտրանքի վերաբերյալ
Օր 2-րդ

Խմբերի թիվը՝ 3

6-7 մասնակիցներ յուրաքանչյուր խմբում: Մասնակիցները կբաշխվեն պատահական սկզբունքով:

Առաջադրանք. այս առաջադրանքը բաղկացած է երկու մասից, որոնցից յուրաքանչյուրի համար կհատկացվի համապատասխանաբար 25 և 10 րոպե, ևս 10 րոպե կհատկացվի արդյունքների ներկայացման և քննարկման համար: Առաջադրանքի ընդհանուր տևողությունն է 50 րոպե:

Ներածություն



Մարդկանցից քչերն են իրենց վարքում առաջնորդվում *սկզբունքներով*, ինչը չափազանց լավ է, քանզի կարող էր այնպես պահատել, որ մեկը սխալվեր դրանց ընտրության հարցում և դրանից բխող բացասական հետևանքները կարող էին տարածվել ամենուրեք: Որքան համընդհանուր են սկզբունքները, այնքան վճռական է դրանք իր համար սահմանած մարդը:

Էմանուիլ Կանտ, Դիտարկումներ գեղեցիկի և կատարյալի զգայության վերաբերյալ

Ճանապարհին ինձ հանդիպող կամ Պոմմերիս գինետանն ինձ հետ խմող իրավաբանության հետ կապ չունեցող մարդիկ ինձ ամենից հաճախ հարցնում են, թե ինչպես կարող եմ պաշտպանել այն հաճախորդներին, ովքեր գիտեմ, որ մեղավոր են: Պատասխանն այն է, որ, նրանց, անշուշտ, ես չեմ պաշտպանում: Երբ բարեկամդ պատմում է, թե ինչ իր արարքի մասին, պետք է նրան խորհուրդ տաս ընդունել մեղքը և պատասխանատվություն կրել հետևանքների համար: Եթե նա հրաժարվում է այդպես վարվել, պետք է թողես նրան առաջ շարժվելու սեփական ուժերով:

Հորաս Ռամփոլ [**Ջոն Մորտիմեր**, <<Ռամփոլը պաշտպանության համար>> *Ռամփոլի երկրորդ հավաքածու*, Պինգվին հրատ., 1988, էջ. 24]

Շատ բարոյական երկրնտրանքներ պայմանավորված են գործողությունների ճիշտ կամ սխալ, ինչպես նաև գործողությունների հետևանքների ճիշտ կամ սխալ լինելու միջև առկա **որոշակի կոնֆլիկտով**:

- Բարոյական հիմնահարցերը հիմնականում միանշանակ չեն՝ սև/սպիտակի հարցեր չեն կամ չունեն այո/ոչ լուծումներ: Հիմնականում դրանք երկրնտրանքի առաջ են կանգնեցնում:

- Երկրնտրանքն ընտրության հարց է՝ հաճախ մեկ վայրկյանում կատարված ընտրության, և հիմնականում հակասական բնույթ ունի: Այս դեպքում ճիշտ և սխալ պատասխան գրեթե չի լինում:
- Երկրնտրանքի հետ գործ ունեցող մարդը պետք է հարցնի իրեն <<արդյո՞ք տվյալ իրավիճակում կա գոհ, ինչու՞ և ինչպե՞ս; որո՞նք են տվյալ իրավիճակի առավելություններն ու թերություններն իր համար, և որո՞նք՝ գործընկերների/շահառուների համար; որո՞նք են հայտնաբերվելու ռիսկերը և դրանից բխող հետևանքները; որո՞նք են իր արարքի բարոյական հետևանքները; որո՞նք են իր կատարած ընտրության հետևանքները հասարակության համար>>:
- Գիտական հետազոտությունները պարզել են, որ յուրաքանչյուր ոք օրվա ընթացքում կանգնում է յոթ մեծ կամ փոքր երկրնտրանքի առջև:
- Երկրնտրանքին պատասխան գտնելը չի նշանակում վերջնական ընտրության կատարում, սակայն, երբ հետ եք նայում, հաճախ ինքնըստինքյան, պահի ազդեցության ներքո հարցի վերաբերյալ տրված մեկնաբանությունը ճիշտ պատասխանն է լինում:
- Կարևոր է նախ ընդունել, որ տվյալ հարցը բարոյական երկրնտրանքի աղբյուր է, ապա պատասխանատվություն կրել Ձեր ընտրության համար: Երկրնտրանքներին լուծումներ գտնելը և ընդունած որոշումներն արդարացնելը հաճախ ավելի հեշտ է կատարել տեսականորեն, քան գործնականում: Այդ իսկ պատճառով, կարևոր է զարգացնել այնպիսի մշակույթ, որտեղ երկխոսությունը խրախուսվում է, օժանդակվում և պահպանվում:
- Հաջորդ երկու վարժությունները կարող են օգտակար լինել այս առումով:

Վարժություն առաջին - 25 րոպե

Լսարանը բաժանվում է երեք խմբի: Յուրաքանչյուր մասնակցի տրվում է թուղթ հետևյալ իրավիճակների նկարագրություններով՝

1. Նախարարության վարչություններից մեկի որևէ պաշտոնյա հենց նոր ավարտել է մի կարևոր հանդիպում նախարարությունում չաշխատող իր գործընկերներից մեկի հետ: Գործընկերոջ հեռանալուց հետո պաշտոնյան նկատում է, որ այցելուն իր սեղանին է թողել մի շատ թանկարժեք կրակայրիչ: Պաշտոնյան զանգահարում է գործընկերոջը և տեղեկացնում կրակայրիչի մասին, իսկ վերջինս առաջարկում է պաշտոնյանին իրեն վերցնել կրակայրիչը, քանի որ ինքը դրա կարիքը չունի: **Արդյո՞ք պետք է պաշտոնյան պահի թանկարժեք կրակայրիչը, թե ոչ:**
2. Բարձրաստիճան պետական մի պաշտոնյա մեկնում է Փարիզ գործուղման: Նա կարող է ճամփորդել <<բիզնես կարգով>>, սակայն որոշում է փոխել իր տոմսը և վերցնել երկու սովորական տոմս, որպեսզի իր կինը ևս իր հետ ճամփորդի: Երկու սովորական տոմսի արժեքը նույնն է ինչ մեկ հատուկ տոմսինը և ոչ ոք չի իմանա տոմսերի փոխանակման մասին: **Արդյո՞ք կարծում եք, որ այդպես վարվելն ընդունելի է:**
3. Պաշտոնյան պատրաստվում է ամուսնանալ: Այդ պաշտոնյան այնպիսի աշխատանք է իրականացնում նախարարությունում, որը նրան հնարավորություն է տալիս օգտվել գաղտնի տեղեկատվությունից: Նրա գործընկերներից մեկը տեղյակ է, որ այդ պաշտոնյայի հարսնացուի եղբայրը հանցագործ է, ում չափազանց հետաքրքրում է նրա ունեցած գաղտնի տեղեկատվության մանրամասները: Այդ գործընկերը տեղեկացնում է իր ղեկավարին հարսանիքի և դրա հնարավոր հետևանքների մասին **Արդյո՞ք կարծում եք, որ այդպես վարվելն ընդունելի է:**
4. Հաշվի առնելով պետական ֆինանսավորման սղությունը՝ քաղաքապետը հասարակական կազմակերպություն է ստեղծում, որը կարող է մասնակցել համայնքային զարգացմանն ուղղված դրամաշնորհների մրցույթների: ՀԿ-ն և քաղաքապետարանը միասին մասնակցում են Տարածքային զարգացման նախարարության հայտարարած դրամաշնորհի մրցույթին և հաղթում են: Ծրագրի իրականացման արդյունքում զգալիորեն կբարելավվեն տեղական ենթակառուցվածքները՝ բնակիչների համար ստեղծելով նոր հնարավորություններ: **Արդյո՞ք նման գործելաոճն ընդունելի է Ձեզ համար:**
5. Նախարարության հետ աշխատող գործընկեր կազմակերպություններից մեկի աշխատակիցը տեղեկացնում է նախարարության պաշտոնյաներից մեկին, որ ինքը Ծաղկաձորում հարմարավետ առանձնատուն ունի և, ելնելով իրենց աշխատանքային լավ փոխհարաբերություններից, կարող է այն որոշ ժամանակով անվճար տրամադրել այդ պաշտոնյային: **Արդյո՞ք սա ընդունելի առաջարկ է:**
6. Դուք նախարարության մատակարարման բաժնում աշխատող պաշտոնյա եք և բոլորովին վերջերս գնել եք 5,000 նոութբուք տիպի համակարգիչ՝ գնման համար զգալի զեղչ ստանալով հաջող բանակցությունների արդյունքում:

Համակարգիչներ վաճառողը գիտի, որ Դուք պատրաստվում եք գնել նմանատիպ համակարգիչ անձնական օգտագործման նպատակով: Նույնանման համակարգիչ տանն ունենալը նաև նպատակահարմար է ծրագրային համատեղելիության տեսանկյունից: Վաճառողն առաջարկում է Ձեզ անվճար համակարգիչ տրամադրել: **Արդյո՞ք կընդունեք այդ առաջարկը:**

7. Մի կազմակերպություն հայցադիմում է ներկայացնում զգալի սուբսիդիա ստանալու նպատակով՝ վերջնաժամկետից մեկ ժամ հետո: Կազմակերպությունը խնդրում է ներկայացված փաստաթղթերի քննությամբ զբաղվող պաշտոնյային փոխել հայցադիմումի վրա նշված ժամը: Առանց սուբսիդիայի այդ կազմակերպությունը կհայտնվի չափազանց ծանր կացության մեջ և ամենայն հավանականությամբ կսնանկանա՝ բավականին մեծ թվով աշատակիցների թողնելով գործազուրկ: Կառավարությանն, ինչպես նաև կազմակերպությանը, գործի նման ելքը չի ուրախացնի: Հետևաբար, պաշտոնյան որոշում է փոխել հայցադիմումի վրա գրված ժամը: **Արդյո՞ք այդ որոշումն ընդունելի է Ձեզ համար:**

8. Նախարարության երեսուն տարվա անբասիր աշխատանքային հեղինակություն ունեցող ֆինանսների վարչության պետը պատրաստվում է թոշակի անցնել: Դուք պատահաբար պարզում եք, որ նա 250,000 դրամ է <<պարտքով վերցրել>> նախարարության ընհանուր օգտագործման համար նախատեսված դրամական ֆոնդից: Բացահայտման արդյունքում ֆինանսական վարչության պետն անմիջապես վերադարձնում է գումարը: Սակայն, նախարարության կանոնադրության համաձայն նման քայլ կատարած աշխատակիցը պետք է հեռացվի աշխատանքից: Տվյալ դեպքում պաշտոնյային չեն հեռացնում աշխատանքից, քանզի պարզ է դառնում, որ նրան շտապ գումար էր անհրաժեշտ իր մահամերձ կնոջ հետ վերջին անգամ արձակուրդի մեկնելու համար /կինն այդ ժամանակ արդեն մահացել էր/: **Արդյո՞ք համաձայն եք պաշտոնյային գործից չհեռացնելու որոշման հետ:**

9. Մի բարձրաստիճան պաշտոնյա պետք է որոշում կայացնի մեծ շինարարական ծրագրի իրականացման համար կապալառուի ընտրության հարցում: Որևէ կազմակերպություն խոստանում է պաշտոնյային 25 000 000 դրամ, որը կփոխանցվի Շվեյցարական բանկերից մեկում նրա համար բացված հաշվեհամարի վրա, այն պարագահում, եթե այդ կազմակերպությունը ստանա շինարարության պատվերը: **Արդյո՞ք սա ընդունելի առաջարկ է:**

10. Մի խոշոր ներդրող որևէ բարձրաստիճան պաշտոնյայի առաջարկում է հոգալ նրա որդու՝ արտասահմանում ուսանելու հետ կապված ծախսերը: Պաշտոնյայի որդին տաղանդավոր է և արտասահմանում իր գիտելիքների զարգացման հնարավորությունը նրա համար հեռանկարային կլինի: Ուսման ավարտից հետո ներդրողի կազմակերպությունը տղային գործի կվերցնի: Պաշտոնյան ընդունում է առաջարկը: **Եթե դուք լինեիք այդ պաշտոնյան, կընդունեիք արդյո՞ք այդ առաջարկը:**

Յուրաքանչյուր մասնակից պետք է գնահատի ներկայացված բոլոր իրավիճակները՝ ելնելով այն հանգամանքից, թե որքանով են յուրաքանչյուրում նկարագրված գործողությունները խախտում ազնվության և անաչառության սկզբունքները: Այնուհետև,

յուրաքանչյուր խումբ պետք է փորձի, հնարավորության սահմաններում, համաձայնության գալ յուրաքանչյուր իրավիճակի շուրջ: Պատասխանները պետք է նշվեն ստորև ներկայացված աղյուսակում: Պետք է նշվեն միայն միաձայն ընդունված որոշումները: Եթե, որևէ իրավիճակի շուրջ մասնակիցները փոխհամաձայնության չեն եկել, դա ևս պետք է նշվի աղյուսակում՝ համապատասխան իրավիճակի դիմաց:

	1	2	3	4	5	6	7	8	9	10
Այո										
Ոչ										

Վարժություն երկրորդ - 10 թույլ

Դուք նախարարության անունից բանակցում եք մասնավոր ընկերության հետ: Պայմանագիրը վերջնական տեսքի բերելուց և ստորագրելուց առաջ Ձեզ մի շարք առաջարկներ են արվում ընկերության կողմից: Առաջարկներից որո՞նք եք Դուք համարում ընդունելի:

1. Գրասենյակում քննարկումների ժամանակ նրանք առաջարկում են սուրճ, թանկարժեք կոնյակ և ծխախոտ:
2. Ձեզ հրավիրում են իրենց հետ մասնակցել երեկոյթի Երևանի ամենաթանկ գիշերային ակումբում, որին մասնակցելու համար Դուք չպետք է վճարեք:
3. Հանդիպումից հետո Ձեզ նվիրում են գեղեցիկ և թանկարժեք օրացույց:
4. Կազմակերպությունը Ձեզ է ուղարկում թանկարժեք գրքերի հավաքածու կազմակերպության հետ վարվող բանակցությունների առարկայի վերաբերյալ:
5. Ձեզ և Ձեր կնոջը/ամուսնուն հրավիրում են օթյակից հետևելու կարևոր ֆուտբոլային խաղի, որտեղ կարող եք օգտվել խմիչքներից և սննդից:
6. Ամանորից և Մուրբ Ծննդից առաջ Ձեզ են ուղարկում նվերների փաթեթ՝ սաղմոնով, խավիարով, օղիով և շամպայնով:
7. Ձեզ առաջարկում են մի շաբաթ անվճար բնակվել կազմակերպության քաղաքից դուրս գտնվող առանձնատանը:
8. Ձեզ առաջարկում են մեկ շաբաթյա ուղևորություն Վիեննա՝ կազմակերպության գլխամասային գրասենյակ, որի ժամանակ Ձեզ հետ կարող եք տանել Ձեր կնոջը/ամուսնուն:
9. Ձեզ առաջարկում են Ձեր խոհանոցում տեղադրել ժամանակակից խոհանոցային կահույք և սարքավորումներ:
10. Ձեզ առաջարկում են մինչև Ձեր կյանքի վերջն անվճար օգտվել կազմակերպության կողմից տրամադրվող I Phone բջջային հեռախոսից, որը հավելյալ ծախսեր չի ենթադրում, քանզի կազմակերպության բջջային ցանցի մասն է կազմում:

Կրկին, յուրաքանչյուր մասնակից պետք է գնահատի բոլոր իրավիճակները՝ ելնելով այն հանգամանքից, թե որքանով են յուրաքանչյուրում նկարագրված գործողությունները խախտում ազնվության և անաչառության սկզբունքները: Այնուհետև, յուրաքանչյուր խումբ պետք է փորձի, հնարավորության սահմաններում, համաձայնության գալ յուրաքանչյուր իրավիճակի շուրջ: Պատասխանները պետք է նշվեն ստորև ներկայացված աղյուսակում: Պետք է նշվեն միայն միաձայն ընդունված որոշումները: Եթե, որևէ իրավիճակի շուրջ մասնակիցները փոխհամաձայնության չեն եկել, դա ևս պետք է նշվի աղյուսակում՝ համապատասխան իրավիճակի դիմաց:

	1	2	3	4	5	6	7	8	9	10
Այո										
Ոչ										